ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/120

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Մասնակից՝ «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Ա.Գյուրջիյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՈՑ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցում, համակարգիչների և համակարգչային սարքերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.07.2019թ. թիվ 26/26-1/12120-2019 գրությամբ «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի 12.07.2019թ. թիվ 31-379 գրության հիման վրա, 19.07.2019թ.-ին «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 22.07.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 26.07.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 26.07.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.08.2019թ.-ին:

2. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն 12.07.2019թ. թիվ 31-379 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

««Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի՝ «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով հայտարարած՝ համակարգիչների և համակարգչային սարքերի ձեռքբերման մրցույթի շրջանակներում, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 4-րդ ենթակետով, առաջին տեղ զբաղեցրած Հովհաննես Աղաբեկյան ԱՁ-ից պահանջվել է ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ պահանջվող, հրավերով առաջարկվող 5-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը, ինչը սահմանված ժամկետում չի ներկայացվել:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ մասնակցին առաջարկվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, սակայն սահմանված ժամկետում Հովհաննես Աղաբեկյան ԱՁ-ի ներկայացրած՝ ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանել Հրավերով սահմանված պահանջներին:»:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.07.2019թ.-ին գրությամբ դիմել է «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.07.2019թ. թիվ 26/26-1/12120-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է նիստին և ներկայացրել է գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

«Ի կատարումն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի հայտնում եմ Ձեզ, որ մասնակցել եմ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպած «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով մրցույթին (այսուհետ՝ Մրցույթ): Բացումից հետո 24.06.2019թ. ստացել եմ ծանուցում Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի խախտմամբ, այն է, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը զետեղված «նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, իսկ Պատվիրատուն ուղարկել է պարզապես համակարգի միջոցով տեքստը հավաքելով: Ծանուցմամբ տեղեկացել եմ, որ 6-րդ չափաբաժնի մասով

մասնակիցների գները եղել են նախահաշվային գնից բարձր և պետք է 27.06.2019թ. մասնակցել բանակցությունների: Բանակցությունների մասնակցել եմ, սակայն գինը չեմ նվազեցրել:

Վերոգրյալից հետո, Մրցույթի հրավերի 7.13-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ծանուցում Պատվիրատուի կողմից չեմ ստացել: Ս.թ. հուլիսի 4-ին ծանուցման վերաբերյալ չունենալով որևէ տեղեկատվություն, որոշել եմ ապահովության համար ուղարկել Մրցույթի հրավերով պահանջվող որակավորման փաստաթղթերը: Միևնույն ժամանակ ցանկանում եմ հայտնել, որ շտկման վերաբերյալ ևս երբևէ ծանուցում չեմ ստացել:

Ուսումնասիրելով պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերը տեսել եմ, որ ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը հայտնել է, որ իմ կողմից Ներկայացված ASUS ապրանքանշանի «ASUS VP228» մոդել ընդհանրապես գոյություն չունի: Ուզում եմ հայտնել, որ տեղեկատվությունը սուտ է և որևէ աղերս չունի իրականության հետ, որպես ապացույց ներկայացնում եմ ASUS ապրանքանշանի «ASUS VP228» մոդելի հղումը պաշտոնական կայքում https://www.asus.com/ru/Comrriercial-Monitors/VP228H/:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Մասնակիցը Բողոքն քննող անձին խնդրել է «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2019/120 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կարիքների համար համակարգիչների և համակարգչային սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ն:

Մասնակիցը «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման հրավերով նախատեսված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին ներկայացրած հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2019թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրությամբ հանձնաժողովը Մասնակցից պահանջել է ներկայացնել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ պահանջվող, հրավերի 5-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.07.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում պահանջվող փաստաթղթերը /Հրավերի Հավելվածներ 3 և 3.1/ չեն ներկայացվել:

Նույն արձանագրությամբ հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում մինչև 08.07.2019թ. ժամը 12:00 շտկել անհամապատասխանությունը:

Շարունակելով նիստը 08.07.2019թ.-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում 04.07.2019թ. ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը՝ ապրանքի ամբողջական նկարագիր, որը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատվել են անբավարար, և հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ի հայտը մերժվել է 5-րդ չափաբաժնի մասով:

Ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Ա. Պետրոսյանի կողմից «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19-20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով համակարգիչների և համակարգչային սարքերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նախագահին 08.07.2019թ.-ին ուղղված զեկուցագրի համաձայն՝ «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19-20» ծածկագրով ընթացակարգի 5-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝

«Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ի կողմից մատակարարվելիք ապրանքի ապրանքային նշանի բնութագիրը չի համապատասխանում նրանց կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրին: Ավելին՝ ներկայացված ապրանքանշանի նման մոդել ընդհանրապես գոյություն չունի:

Մասնակցի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 3.1) առկա 5-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի համաձայն՝ էկրանի տեսակը՝ AH-IPS LCD, լուսավորության տեսակը՝ W-LED համակարգ, էկրանի չափը՝ 22 դույմ, արդյունավետ դիտարկման տարածքը՝ 552.96 (H) x 311.04 (V), ասպեկտային հարաբերակցություն՝ 16:9, օպտիմալ որոշում՝ 2560 x 1440 @ 60Hz, արձագանքման ժամանակը (տիպիկ)՝ 14 (GTG) մվ, խելացի արձագանք (տիպիկ)՝ 5 ms (GtG), պայծառություն՝ 350 CD / մ ^{2}, կոնտրաստ (տիպիկ)՝ 1000:1, խելացի կոնտրաստ՝ 20,000,000:1, փիքսելի դաշտ՝ 0.216 x 0.216 մմ, դիտման անկյուն՝ 178^0 (H)/178^0 (V) և @ C/R > 10, էկրանի գույներ՝ 16.7 M (True 8 bit), sRGB, սկանավորման հաճախականություն՝ 30 - 83 kHz (H) / 56 - 76 Hz (V), սնուցում՝ ECO mode: Երաշխիքային ժամկետ՝ 365 օրացուցային օր:

Հրավերում 5-րդ չափաբաժնի մասով ապրանքի տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ էկրանի տեսակը՝ AH-IPS LCD, լուսավորության տեսակը՝ W-LED համակարգ, էկրանի չափը՝ 22 դույմ, արդյունավետ դիտարկման տարածքը՝ 552.96 (H) x 311.04 (V), ասպեկտային հարաբերակցություն՝ 16:9, օպտիմալ որոշում՝ 2560 x 1440 @ 60Hz, արձագանքման ժամանակը (տիպիկ)՝ 14 (GTG) մվ, խելացի արձագանք (տիպիկ)՝ 5 ms (GtG), պայծառություն՝ 350 CD / մ ^{2}, կոնտրաստ (տիպիկ)՝ 1000:1, խելացի կոնտրաստ՝ 20,000,000:1, փիքսելի դաշտ՝ 0.216 x 0.216 մմ, դիտման անկյուն՝ 178^0 (H)/178^0 (V) և @ C/R > 10, էկրանի գույներ՝ 16.7 M (True 8 bit), sRGB, սկանավորման հաճախականություն՝ 30 - 83 kHz (H) / 56 - 76 Hz (V), սնուցում՝ ECO mode: Երաշխիքային ժամկետ՝ 365 օրացուցային օր:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.07.2019թ. թիվ 26/26-1/12120-2019 գրությամբ «Հովհաննես

Աղաբեկյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի

նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.....:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պարտավոր է ապրանքների գնման դեպքում ներկայացնել՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատաս-խանության վերաբերյալ:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը ներկայացվել են ոչ ամբողջական կամ դրանց գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝

առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ՝

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կարիքների համար համակարգիչների և համակարգչային սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ն ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովը Մասնակցից պահանջել է ներկայացնել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ պահանջվող, հրավերով առաջարկվող 5-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.07.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում պահանջվող փաստաթղթերը /Հրավերի Հավելվածներ 3 և 3.1/ չեն ներկայացվել:

Նույն արձանագրությամբ հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում մինչև 08.07.2019թ. ժամը 12:00 շտկել անհամապատասխանությունը:

Շարունակելով նիստը 08.07.2019թ.-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում 04.07.2019թ. ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը՝ ապրանքի ամբողջական նկարագիր, որը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը

գնահատվել են անբավարար, և հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ի հայտը մերժվել է 5-րդ չափաբաժնի մասով:

Ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Ա. Պետրոսյանի կողմից «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19-20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով համակարգիչների և համակարգչային սարքերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նախագահին 08.07.2019թ.-ին ուղղված զեկուցագրի համաձայն՝ «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19-20» ծածկագրով ընթացակարգի 5-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ի կողմից մատակարարվելիք ապրանքի ապրանքային նշանի բնութագիրը չի համապատասխանում նրանց կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրին: Ավելին՝ ներկայացված ապրանքանշանի նման մոդել ընդհանրապես գոյություն չունի:

Մասնակցի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 3.1) առկա 5-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի համաձայն՝ էկրանի տեսակը՝ AH-IPS LCD, լուսավորության տեսակը՝ W-LED համակարգ, էկրանի չափը՝ 22 դույմ, արդյունավետ դիտարկման տարածքը՝ 552.96 (H) x 311.04 (V), ասպեկտային հարաբերակցություն՝ 16:9, օպտիմալ որոշում՝ 2560 x 1440 @ 60Hz, արձագանքման ժամանակը (տիպիկ)՝ 14 (GTG) մվ, խելացի արձագանք (տիպիկ)՝ 5 ms (GtG), պայծառություն՝ 350 CD / մ ^{2}, կոնտրաստ (տիպիկ)՝ 1000:1, խելացի կոնտրաստ՝ 20,000,000:1, փիքսելի դաշտ՝ 0.216 x 0.216 մմ, դիտման անկյուն՝ 178^0 (H)/178^0 (V) և @ C/R > 10, էկրանի գույներ՝ 16.7 M (True 8 bit), sRGB, սկանավորման հաճախականություն՝ 30 - 83 kHz (H) / 56 - 76 Hz (V), սնուցում՝ ECO mode: Երաշխիքային ժամկետ՝ 365 օրացուցային օր:

Հրավերում 5-րդ չափաբաժնի մասով ապրանքի տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ էկրանի տեսակը՝ AH-IPS LCD, լուսավորության տեսակը՝ W-LED համակարգ, էկրանի չափը՝ 22 դույմ, արդյունավետ դիտարկման տարածքը՝ 552.96 (H) x 311.04 (V), ասպեկտային հարաբերակցություն՝ 16:9, օպտիմալ որոշում՝ 2560 x 1440 @ 60Hz, արձագանքման ժամանակը (տիպիկ)՝ 14 (GTG) մվ, խելացի արձագանք (տիպիկ)՝ 5 ms (GtG), պայծառություն՝ 350 CD / մ ^{2}, կոնտրաստ (տիպիկ)՝ 1000:1, խելացի կոնտրաստ՝ 20,000,000:1, փիքսելի դաշտ՝ 0.216 x 0.216 մմ, դիտման անկյուն՝ 178^0 (H)/178^0 (V) և @ C/R > 10, էկրանի գույներ՝ 16.7 M (True 8 bit), sRGB, սկանավորման հաճախականություն՝ 30 - 83 kHz (H) / 56 - 76 Hz (V), սնուցում՝ ECO mode: Երաշխիքային ժամկետ՝ 365 օրացուցային օր:

Հրավերում 5-րդ չափաբաժնի մասով ապրանքի տեխնիկական բնութագիրը համադրելով Մասնակցի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 3.1) առկա 5-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի հետ ակնհայտ է, որ դրանք նույնանում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ հրավերով նախատեսվում է, որ ապրանքների գնման դեպքում մասնակիցն առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը:

Տվյալ դեպքում Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել է ապրանքի տեխնիկական բնութագիրը, որը ամբողջությամբ համապատասխանում է Ընթացակարգի հրավերի 5-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագերին, որպիսի պայմաններում Մասնակիցը չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ կարող էր հանգեցնել գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.07.2019թ. թիվ 26/26-1/12120-2019 գրությամբ «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**